

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Ջրաձորի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 2) բարձրագույն կրթությունը.
- 3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր)

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը.
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ).
- 5) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում).
- 6) աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2018 թվականի օգոստոսի 14-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 12-ը ներառյալ ժամանակահատվածում ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00 ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2018 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 15:00-ին, Շիրակի մարզի «Ջրաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ.Ջրաձոր 4-րդ փողոց 52 շենք):

Տեղեկությունների համար զանգահարել՝ 7098-39-39-06/ հեռախոսահամարով: